

ծայրայեղ կոմունիստ մը այսօր կը խոստովանի, թէ անհրաժեշտ է վերականգնել բուրժուազիան տնտեսապէս, թէեւ կը թեւադրէ, որ ոչ մէկ պարագայի տակ թոյլ տրուի անոր կազմակերպուիլ քաղաքականապէս:

Արդէն բոլշեւիկ ղեկավարներու համար իսկ պարզ է, որ կոմունիստական փորձը Ռուսիոյ մէջ վիժած է: Երկրի տնտեսութիւնը քայքայուած է, աշխատանքի արդիւնաւէտութիւնը ինկած է, գործաւոր դասակարգը, զօրանալու փոխարէն, տկարացած է, գիւղացիութիւնը աղքատացած է, չարաչառութիւնը երբեք եւ ոչ մէկ տեղ տեսնուած չափեր ու ձեւեր ստացած է եւ պետութիւնն ու ժողովուրդը հասած են այնպիսի յուսահատական վիճակի մը, որ, առանց օտար պետութեանց եւ մանաւանդ օտար դրամագլուխի գործօն ու ընդարձակ օգնութեան, անկարելի է երկարատեւ գլուխ պահել:

Տնտեսական քայքայումին հետ զուգընթաց Ռուսիոյ մէջ կ'աճի եւ կը ծաւալուի քաղաքական ուժաբախումը:

Նոր անուններու քողին տակ կը վերականգնուի հին, սեւ բռնակալութիւնը, բայց աւելի ահաւոր, աւելի սպաննիչ միջոցներով եւ մեթոտներով: Դասակարգային պայքարի կարմիր դրօշակին տակ բոլշեւիկները կը կըռուին միմիայն իրենց առանձնաշնորհեալ խրմբակցութեան շահերուն եւ տիրապետութեան համար, յուսահատութեան գիւրկը մղելով բանուորա - գիւղացիական զանգուածները: Վարկաբեկելով անոնց աչքին կոմմունիզմի եւ սոցիալիզմի դադափարները, բոլշեւիկները ցեխի հետ կը հաւասարեցնեն իրենց կարմիր դրօշակը նաեւ օտար երկիրներու աշխատաւորութեանց աչքին, երբ ձեռք կը մեկնեն ջարդարար ու յետադէմ թուրք փաշաներուն, ձրգտելով զանոնք գործիք դարձնել «համաշխարհային յեղափոխութեան» հրահրման համար, բայց իրօք իրենք ծառայելով համիւլամական շարժման, զոր կը ղեկավարեն իրենց բարեկամ Անկորայի փաշաները:

Եթէ մեր հայեացքը ուղղենք այժմ դէպի արեւմտեան երկիրները, ուր տարիներէ ի վեր ռուս բոլշեւիկները «յեղափոխական» աշխատանք կը թափեն, հոն եւս պիտի գտնենք ընկերվարական շարժումը վարկաբեկող գործեր

եւ քայքայող երեւոյթներ, հոն եւս պիտի տեսնենք քաղաքական յարաճուն ուժաբախում մը:

Ամենուրեք բոլշեւիկները կատաղի պայքար կը մղեն ոչ այնքան բուրժուական դասին դէմ, որքան գործաւորական կազմակերպութեանց դէմ, միմիայն այն պատճառով, որ անոնք թէեւ ընկերվարական են, բայց չեն բաժնէր Մոսկուայի քանդիչ տեսակէտները եւ մեթոտները: Փոխանակ միացնելու բանուորական զանգուածներն ու կազմակերպութիւնները, բոլշեւիկները ամէն ճիգ կը թափեն ջրլատելու, պառակտելու, տկարացնելու ընկերվարական շարքերը: Իրենց բռնութիւններով եւ ծայրայեղութիւններով ամենուրեք անոնք կը զօրացնեն միայն պահպանողական տրամադրութիւնները, առաջ կը բերեն ամէն տեղ բուրժուական բալշեւիզմ, որ Իտալիայի մէջ Ֆաշիզմ անուան տակ, իսկ ուրիշ երկիրներու մէջ ալ տարբեր անուններով ու ձեւերով միշտ աւելի ու աւելի սպառնական համեմատութիւններ կ'առնէ: Նոյնիսկ այն պետութեանց մէջ, ուր ատեն մը բոլշեւիկները բաւականին յաջողութիւններ ունեցան եւ վտանգաւոր ուժ դարձան, այժմ արդէն հետզհետէ անոնք կը կորսնցնեն հողը իրենց ոտքերու տակէն: Աստիճանաբար եւ շատ զգալի կերպով անոնք կը նուազին ու կը տկարանան Իտալիոյ, Ֆրանսայի, Գերմանիոյ եւ Բուլղարիոյ մէջ, — այսինքն՝ ճիշդ հոն, ուր ղեռ երէկ անոնք մտահոգութիւն կը պատճառէին իրենց կառավարութեանց:

Պատերազմի հետեւանքով քայքայուած եւ մոլորուած բանուորական զանգուածները Արեւմուտքի մէջ յանձին իրենց զիտակէց ու առողջ մասերու եւ ընկերվարական կազմակերպութեանց միշտ աւելի ու աւելի յստակ եւ խիստ կերպով կը ծառանան բոլշեւիկեան շարժման դէմ եւ կը ձգտին արմատի մէջ խեղդել Մոսկուայի կոմունիզմի ծաւալումը: Գերմանիոյ մէջ կը միանան չափաւոր սոցիալ-դեմոկրատները անկախ սոցիալիստներու հետ, որոնք դեռ երէկ կը սիրաբանէին բոլշեւիկներու հետ, եւ կը կազմեն ընդհանուր հուժկու ճակատ մը թէ միապետականներու եւ թէ կոմունիստներու դէմ: Այս միացումը անտարակոյս նախաբանն է Երկրորդ եւ Վիեննայի (21½)